ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/105

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

Բողոքաբեր՝ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով բաց մրցույթ, դեղորայքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.09.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 08.09.2020 թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով բաց մրցույթում կատարել փոփոխություն և ցանկից հեռացնել 1-ին և 3-րդ չափաբաժինները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 23.09.2020թ.-ին:

23.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/105 համարի ծածկագիրը:

01.10.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 01.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

2. «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն 23.09.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով դեղորայքի մատակարարման բաց մրցույթ, որի մեջ ներառել է հստակ այն չափաբաժիններն ու հստակ այն քանակները, որով «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն պարտավոր է կնքել պայմանագիր «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի հետ և պատվիրել այդ նույն ապրանքները նույն քանակներով «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին:

Մասնավորապես՝

Չափաբաժին 1-կարբոպլատին, լուծույթ ն/ե ներարկման 10մգ/մլ 45 մլ ապակե սրվակ

Քանակը-200 հատ,

Չափաբաժին 3-դոքսոռուբիցին, խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 2մգ/մլ ապակե սրվակ 25մլ

Քանակը-500 հատ:

Վերոնշյալ երկու չափաբաժինները ադեն իսկ ներառված էին «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ- կողմից հայտարարված թիվ ՈՒԱԿ-

ԲՄԱՊՁԲ-20/65 ծածկագրով գնման մրցույթում, որոնց համար պատվիրատուն պարտավոր է պայմանագիր կնքել մեր կազմակերպության հետ որպես ընտրված մասնակից:

Կից ներկայացնում ենք պատվիրատուի արձանագրությունը, որով պատվիրատուն «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից է ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացրել:

Սույն արձանագրությունով նաև սահմանվել է 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

2020թ.-ի սեպտեմբերի 9-ին էլեկտրոնային ծանուցմամբ պատվիրատուն ուղարկել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը;

Կից ներկայացնում ենք:

Նաև Ձեզ ենք ներկայացնում թիվ ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65 ծածկագրով գնման հրավերի տեքստը: Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի

2. Գնման առարկայի բնութագրերը՝

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման

58. եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ:

Սակայն մրցույթը հայտարարվել է սույն թվականի սեպտեմբերի 9-ին, երբ դեռ նախորդ ընթացակարգը չկայացաց չի հայտարարվել:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի, յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 08.09.2020 թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով բաց մրցույթում կատարել փոփոխություն և ցանկից հեռացնել 1-ին և 3-րդ չափաբաժինները:

3. <u>«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 23.09.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14370-2020 գրությամբ դիմել է «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 23.09.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 28.09.2020թ.-ի թիվ 01/10-206 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84 ծածկագրով գնման ընթացակարգում ներառված ապրանքներն անհրաժեշտ է ձեռք բերել Պատվիրատուի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով:

Պատվիրատուի առանցքային գործունեությունն առնչվում է մարդու կյանքի ու առողջության պահպանմանն ու վերականգնմանը, ուստի շատ կարևոր է, որպեսզի դեղորայքի մատակարարումը կատարվի պատշաճ ձևով, ժամանակին և որակյալ:

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված մրցույթներին, և աչքի է ընկել իր անպատասխանատվությամբ, ներկայացված ապրանքների անորակությամբ, որոնց կիրառումը բժշկության մեջ կհանգեցնի անդառնալի հետևանքների, ինչը Պատվիրատուն չի կարող թույլ տալ:

Ինչ վերաբերվում է լրացուցիչ քանակով ապրանքների ձեռքբերմանը, այն զուգադիպել է ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65 ծածկագրով գնման ընթացակարգում ներառված գնման առարկաների քանակների հետ:

Հարկ եմ համարում նաև նշել, որ 09.09.2020թ.-ին Պատվիրատուի կողմից «Աբամա Թրելդ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որը սահմանված ժամկետում (մինչև 24.09.2020թ.) վերջինիս կողմից չի ներկայացվել՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/105 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 08.09.2020թ.-ին հայտարարվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 200 հատ կարբոպլատին ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33651232/12, իսկ 3-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 500 հատ դոքսոռուբիցին ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33651230/10:

iii. www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների պլանի համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ կարբոպլատինի ձեռքբերման համար նշվել է 33651232/12, քանակը 200, իսկ գինը՝ 6 800 000 ՀՀ դրամ, իսկ դոքսոռուբիցինի ձեռքբերման համար նշվել է 33651230/10, քանակը 500, իսկ գինը՝ 6 750 000 ՀՀ դրամ:

iv. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 20.05.2020թ.-ին հայտարարվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 200 հատ կարբոպլատին ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33651232/510, իսկ 4-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 500 հատ դոքսոռուբիցին ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33651230/508:

v. www.gnumner.am կայքում առկա «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների պլանի համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ կարբոպլատինի ձեռքբերման համար նշվել է 33651232, քանակը՝ 900, իսկ դոքսոռուբիցինի ձեռքբերման համար նշվել է 33651230, քանակը՝ 1970:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 23.09.2020թ.-ին ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով Ընկերությունների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոնում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի,

երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 08.09.2020թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով բաց մրցույթ հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝

- 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 200 հատ կարբոպլատին ապրանքը, ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33651232/12:

- 3-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 500 հատ դոքսոռուբիցին ապրանքը, ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33651230/10:

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 20.05.2020թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝

- 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 200 հատ կարբոպլատին ապրանքը, ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33651232/510,

- 4-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 500 հատ դոքսոռուբիցին ապրանքը, ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33651230/508:

www.gnumner.am կայքում առկա «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների պլանի համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ կարբոպլատինի ձեռքբերման համար նշվել է 33651232, քանակը՝ 900, իսկ դոքսոռուբիցինի ձեռքբերման համար նշվել է 33651230, քանակը՝ 1970:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է, որ բողոքի քննության վեճի առարկա հանդիսացող 1-ին և 3-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների ձեռքբերման համար հայտարարված Մրցույթը չի հակասում է Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին՝ ինչպես նշել է Ընկերությունը ներկայացված բողոքում, քանի որ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից նշված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» և «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրերով գնման առարկա հանդիսացող կարբոպլատին և դոքսոռուբիցին ապրաքների անվանումները և քանակները թեև նույնն են, սակայն www.gnumner.am կայքում առկա գնումների պլանի համաձայն 2020թ.-ի ընթացքում նախատեսվել է ձեռքբերել կարբոպլատին ապրանքից՝ ընդհանուր 900 հատ, իսկ դոքսոռուբիցին ապրաքից՝ 1970 հատ, հետևաբար Պատվիրատուն կարող էր տարբեր մրցույթներով սպառել իր կարիքների համար գնումների պլանում առկա նույն ապրանքատեսակները տարբեր ժամանակահատվածում գնման ընթացակարգեր հայտարարելու միջոցով, ընդ որում՝ նույն քանակներով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերությունը բողոքի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին չներկայացրեց նույն ապրանքները երկու մրցույթներում ներառված լինելու վերաբերյալ որևէ ապացույց, ինչպես նաև չներկայացրեց Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու մասին վերաբերելի ապացույց առ այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ Մրցույթի պահանջները չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները, ինչի արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի

պայմաններում «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/84» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 23.09.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/105 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**